


6279

U. S. M.

Cat-wg Ctip

U. S. M.

1898



Հ/Գ

231 W 2191

Ա. ԱՍՍԱՆ


# ՆՈՒԱԳՆԵՐ

ՆԻԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆԱՀԱՏԱԿ-  
ՀԵՐԱԾԵՐԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

2011

ԱՐԵՎԻ  
1898



ՏՊԱԳՐ. ԱՐԱՐԱԿԱՆԻ

2003



891542-1 1784  
U - 74

I

## ՀԵՐՈՍԸ

Այնտեղ լիուա՞ն գաղաթին  
ինչոր մի բան վարդագոյն է պաղղում,  
եւ նորա մօտ կողքերին  
ինչոր բաներ տատանւում են, երերում:

Անձնւէրն է նա ազգի,  
Որ ընկեր է բոլորովից խացոստած  
եւ ընկերքն են իւր արի,  
Որ նորա դին տանելու են պատրաստած:

Դեռ շնչում է հերոսը  
եւ խնդրում հէնց այնտեղ իրան ամփոփել,  
Միայն վերջին բարեւը  
Պատւիրում է իւր սիրուհուն հաղորդել:

= 4 =

II

# ՄԻ ԼԱՐ . . .

Մի' լար, օ՛ մայր իմ,  
 Մի' լար, մի' կարծիր,  
 Որ զուր պիտ կորչիմ.  
 Այդ մի' մըտածիր:

Թո՛ղ լինի մարտը  
 Միւտ անհաւասար,  
 Բայց, ո՛չ, չէ ոյժը  
 Դատաւոր արդար:

Թո՛ղ ոյժը լինի  
 Խիստ անհաւասար,  
 Բայց գաղափարի  
 Գոռ ձայնը արդար

= 5 =

Միւտ պիտի տանէ  
 Վեհ յաղթանակը  
 Եւ բարձըր պահէ  
 Իւր զըրօշակը:

Այդ յաղթանակը  
 Թէկ պահանջէր  
 Հերոսիս կեանքը  
 Եւ որդիր ընկնէր,

Բայց դո՛ւ, օ՛ անդին  
 Մայրիկ սիրելի,  
 Մի' լար, քո որդին  
 Զուր չըպիտ կորչի:



= 6 =

]II

## Կ Ր Ի Ւ

Կ եցցէ՛ կոիւ . . . դէպի յառաջ,  
 Յառաջ զընանք մենք քաջի պէս  
 Կուի դաշտում երբէք հառաչ  
 Թող չը դուրս զայ մեր բերանից:  
  
 Ո ումբ ու գնտակներ մեր ձեռին,  
 Սարսեցնենք մեր թընամու սիրտ.  
 Թո՞ղ որոտան նորա գլխին  
 Մեր զէնքերը մահացու բիրտ:  
  
 Ի՞նչու արդեօք այսքան տարի  
 Մեր թընամին մեզ պիտ տանջի.  
 Հասաւ ժամը ազատ կուի,  
 Յառաջ զընանք վեհ պայքարի.

= 7 =

Դիարիւն հոսէ թո՞ղ մեր կրծքից,  
 Բայց անվրդով մըղենք կըռիւ.  
 Մինչ վերջին շունչ դուրս զայ բերանից  
 Դարձեալ գոչենք «կեցցէ կըռիւ . . . »

IV

## ՀԱՅՐԵՆԻՔ

Սյն երկիրը, ուր ես առաջին անգամ  
 Վայելել եմ բարիքները բընութեան,  
 Էլ արդեօք, ով երկինք, կրկին մի անգամ  
 Արժանի պիտ լինիմ բաղցը տեսութեան:

Օ՛, քա՞զը օրեր, սիրուն ժամեր մանկութեան,  
 Լեռներ, ձորեր, կապոյտ երկինք հայրենեաց,  
 Եւ գո՞ւք, խաղե՛ր չարաճընի մանկութեան  
 Միւս մընում էք իմ սըրտումը անմռաց:



= 8 =

V

# ՆԱԾՆԿԱԾ ԵՐ . . .

Նա ընկած էր լոիկ-մնջիկ  
 Կարկաչահոս գետափին  
 Եւ նայում էր մեղմ, քնքուշիկ  
 Պարզ-կապուտակ երկընքին:

Նա փնտռում էր իւր աստղիկը  
 Հազարաւոր աստղաց մէջ  
 Եւ մերթ նայում յստակ ջրին,  
 Խոր թափանցում նորա մէջ:

Խեղճը շըմած վեր էր ընկել  
 Սյդ գետակի ափի մօտ  
 Եւ չէր յնչում ի՞նչ էր անցել  
 Մօտ օլելում իւր զլիսով:

= 9 =

Խեղճի կընոջ յափըշտակել,  
 Տարել էին վատ քըրդերն.  
 Նա ուղել էր նորան առնել  
 Անդութների ձեռքիցըն

Բայց վիրաւոր վայր էր ընկել  
 Շունչը կտրած, կիսամեռ.  
 Երկու ըոպէ էր մնացել,  
 Որ նա հոգին աւանդէր:

Պատւոյ համար էր նա կըռւել  
 Իբրև հերսոս անվլեհեր,  
 Ազատ կըռւումն էր նա ընկել,  
 Որով մահն էր պատւաբեր:


## ԳԱՂԹԱԿԱՆ ՈՐԲԸ

Ողորմութիւն ըրէք ինձի ,  
Օ՛ ա՛կն սյը ու պարոններ .  
Օգնէ՛ք ինձի , ո՛ք Քրիստոսի ,  
Մուբացիկ եմ որբ , ա՞տէր :  
  
Մեր տուն ու տեղն, ո՛հ , անդութ քիւրդն  
Քրաւ զըմէն տակն ու վեր ,  
Եւ ա՞պ սշտագան իմ հէրն ու մէրն  
Հնկան մեռան խեղճ , անտէր :  
  
Իսկ ես որբուկո թափառելով  
Երկրէ-երկիր , սար ու ձոր ,  
Եկի մնացի հոս այն յուսով  
Որ պիտ գտնեմ օր անդորր :

Ուրեմն տըւէք ողորմութիւն  
Խեղճ որբուկիո գաղթական .  
Տըւէ՛ք ինձ գործ , կամ օգնութիւն  
Հրէք նիւթով կենսական :

## ԸՆԿԵՐՈՁՍ

Օ՛ , տուր ձեռքըդ ինձ , ընկեր թանգագին ,  
Տուր , որ սեղմեմ այն չերմ եղբօր սիրով .  
Եւ այս աշխարհում երկուսս միասն  
Կը լինինք անցաղթ , միացած ոյժով :  
  
Եի՛ երկընչիր դու , չարատանջ ընկեր ,—  
Թէկ չար աստղի տակ ենք մենք ծընւել ,  
Բայց երբ միայնինք երկուսիս ուժերն  
Եիշտ գէպի յառաջ կ'երթանք անարդել :



**ԱԶԱՏ ԶԵՅՑԹՈՒԽՆ**  
(1896 թ.)

Թնդաց Զէյթուն ահեղ ձայնով,  
Սարսափ ձըգեց տաճկի սիրոն.  
Պատեց լեռներն թանձըր ծուխով  
«Կեցցէ քաջեր» գոռացին.—

«Արշալոյսըն աղատութեան  
Ահա ծագեց վերջապէս。  
Հայեր ի գաշտ մեր փրկութեան  
Դէ՛հ, Խիզախէ՛ք քաջի պէս:»

Թնդաց Զէյթուն երկրորդ անգամ,  
Դըղբբդեցրեց եւրոպան.  
Եւ Հայերը կռւէ՛ գաշտում  
«Աղատ Զէյթուն» մի գըտան:



**ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ**  
(Համուած Պօէմայից)

Իմ խանդակաթ մայր ու քոյրեր  
Թողած սիրոյս կարօտով,  
Թափառում եմ սար ու ձորեր  
Խըղճիս ձայնին լըսելով:

Իմ եղբայրները տանջւում են  
Բռնակալի լուծի տակ,  
Եւ հայրենիքս աւերում են  
Քիւրդ ու չէրքէղը վայրագ:

Եղբայրն եղբօր պէտք է օգնէ  
Այդ է փրկչի պատւէրը,  
Թող ամեն մէկն այն կատարէ  
Ինչ հրամայել է Տէրը:

Օ՛, զընում եմ ես օգնութեան  
իմ եղբօրը չարատանջ,  
Աւետել նրան օր փրկութեան . . .  
Դէ՛հ իմ նըժոյդ դէպ՝ առաջ . . .

Ա՛հ, երազներ սոկեղէնիկ,  
Պիտի լըցնէ՞ք դուք մի օր  
Կեանքիս տենչանքն այն երջանիկ . . .  
Պիտի տեսնեմ ես այն օրն :

Մի օր մենք էլ պիտի մեռնիք,-  
Այդ է կեանքի անողոք  
Ու անփոփոխելի օրէնք . . .  
Սակայն այդ չէ մեր բողոք :

Թո՛ղ որ մեռնիք մենք արիութեան  
Փառքովոր մեռնելու ենք .  
Կռւենք ի սէր ազատութեան  
Իւ փրկւենք, կամ ողջս կորչենք :

Դէ՛հ, իմ նըժոյդ, դւարթագին  
Յառաջ խաղա՛, ուաց՛ք  
Սպասում են մեղ, օ՛, անգին  
Մեր եղտայրներն . . . Շտազիք . . .



# ՏԻՐԻՐ ԵՐԳ

Ես երգում եմ, բայց ո՛չ թէ երգ սիրային  
Այլ երգերը տանջանաց ու զրկանքի .  
Գիտեմ, սակայն, կոյր ամբոխը մոլեզին  
Պիտի գոշէ իւր ձայնովը ահռելի .  
«Ի խաչ հան զդա, ի խաչ հան այդ պօէտին,  
Որ չը լըսւի ձայնը նորաքընալին,  
Զի տիտոր ևն գեղգեղաճքը լարերի  
Զի երգումէ տանջանքներ գերմարդկային :»

Այո՛, զիտեմ, դուր չէ գալիս ամբոխին  
Գեղգեղաճքը իմքնարիս լարերի,  
Զի տըխուր են, համակւած են վըշտագին  
Տանջանքներով մեր մարդկային սերունդի,  
Եւ ո՛չ նըման այն կոյր երգչի քընարին,  
Որ զիտէ միշտ միջավայրում խթախճանքի  
Երգել չըճւանք ու սէր տըդէտ ամբոխին  
Եւ բըթացնել խելք ու միաբը ամենքի:



ԳԵՐԻ ՎԵՐ

Օհ, շատ անձուկ է հողեղին աշխարհն,  
Բովանդակ կեանքիս նա չէ բաւարար.  
Ինչո՞ւ, չը գիտեմ, մեզ այս ճանապարհն  
Նշանակել է խիստ ու անարդար:

Կուզեմ սաւառնիւ դէպի վեր, միշտ վեր,  
Այնտեղ վերևում աղաս օդ ծըծել,  
Աղաս կեա՞ք վարել, անվախ, անվեհեր



6279

ՆՈՒՍՏԱՆԵՐԻ գինն է 10 կոպէկ (25 սնթ.)

Դիմել ՇՄիռնթիւնաի խմբագրութեան:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1255732

